ՍԻԱՄԱՆԹՈՅԻ ԲՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Դ. ԲԵՔՄԵՋՅԱՆ

Հայ մեծ բանաստեղծների համաստեղության մեջ ինքնատիպ բնապաշտակա՛ն զգացողությամբ և այդ զգացողության ուրույն ու հետաքրքրական դրսևորումներով աչքի է ընկնում Ատոմ Յարճանյանը՝ Սիամանթոն։ 1909 թ. ստեղծված և շատ խորհրդանշական վերնագիր կրող «Բնության լացը» անավարտ եղերերգության առաջին մասում Սիամանթոն գրում է.

Քե՛զ, չարաղոր օրենքներու և անչափելի անարդարության այսօրվա
մարդկություն,
Եվ քե՛զ, մարդկություն՝ որ եղբայրության ապառնիին տիրացող
ոսկեղեն հսկան պիտի ըլլաս,
Ձեր երկուքին համար, ես՝ արևելքներու և արևներու իդեապաշտ
և ըմբոստ քնարավորս
Ցավակոծ ցեղիս բարկության բոցը և իր ավերված աշխատանքին
մրրկե բողոքը պիտի բերեմ...։

Բանաստեղծը, կարծես, իր հավատո հանգանակն է ամփոփել այս չորս տողերում։ Սիամանթոն ներկայացնում է այստեղ համարյա իր ողջ ստեղծագործության պրոբլեմատիկ ուղղվածությունը, որը կայանում է աշխարհի ու մարդկության առջև հարազատ ժողովրդի տառապանքն ու ողբերգությունը քնարելու իր առաքելության մեջ, շեշտելով բանաստեղծական աշխարհայացք ունենալու իր բնապաշտական մեկնակետը. «արևելքներու և արևներու իդեապաշտ և ըմբոստ քնարավորս»։

Լինելով իր էությամբ կենսունակ մի ժողովրդի բանաստեղծը, պատահական չէ, որ Սիամանթոն որդեգրեր բնության կենսատու արևային խորհուրդը։ Սակայն հենց այստեղ էլ պետք է փնտրել բանաստեղծի ողբերգության աղբյուրը. խախտվել է բնության ներդաշնակությունը՝ բնության հրաշալիքները կյանք բուրելու ու գոյությունը փառավորելու փոխարեն արյուն ու մահ են բուրում իր հայրենիքում։ «Արևներու ծարավեն խենթ» բանաստեղծը իր «Հոգիս» բանաստեղծության մեջ կսկիծով գրում է.

Հոգիիս մեջ երբեմն արշալույսներ կ՚արյունին...

Սիամանթոյի բնապաշտական զգացողության համակարգը բազմատարր է։ Այն, հիմնականում պայմանավորելով բանաստեղծությունների, բանաստեղծական շարքերի թեման ու տրամադրությունները, իր արտահայտությունն է գտնում ենթարկվելով բանաստեղծական թեմային և գաղափարական ուղղվածությանը։ Համակարգի հիմնական տարրերը՝ արևը, արշալույսը, խավարը, հողը, հայրենի գետերն ու լեռնաշխարհը և այլն, մերթ դրսևորվում են որպես (բանաստեղծական շարքերի արտահայտած տրամադրություններին

համապատասխան) խորհրդանիշեր, մերթ իրենց արտահայտությունն են գտնում որպես բանաստեղծական միջավայր և մերթ էլ շնչավորվում են ու դառնում ստեղծագործության ասելիքի ուղղակիորեն կրողը։

Արդեն նախորդ դարի վերջերից, ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ արյունալի հաշվեհարդարների, անընդհատ խորացող ու սաստկացող համիդյան հայահալած քաղաքականության պատճառով արևմտահայ իրականության մեջ գրեթե մոռացվել էին և կամ հետին պլան էին մղվել նախորդ գրական իրապաշտական շարժման նվաճումները։ Քաղաքական ռեակցիան և անբովանդակ բանաստեղծությունը մեր գրականությունը դատապարտել էին մի տեսակ ամուլ վիճակի, անպտուղ գոյության։ Այս շրջանում էր ահա, որ օտարության մեջ Սիամանթոն՝ «արևելքներու և արևներու իդեապաշտ և ըմբոստ քնարավորը» հնչեցրեց իր «Դյուցազնորենը»՝ պայքարի, մարտնչումի, հերոսական կռիվների մարտահրավեր կարդալով ու հույսի ջահեր վառելով։ Սիամանթոյի երգը ժողովրդի էությունից փրթած ճիչի էր նման։

XIX դարի վերջին տասնամյակներում Եվրոպայում և քիչ ավելի ուշ նաև մեզանում արվեստների դեկադենտային ուղղություններին համընթաց նկատելի է մի շարժում՝ զգալի հետաքրքրություն է ցուցաբերվում արևելյան և մասնավորապես հնդկական պանթեիստական փիլիսոփայական ուսմունքների նկատմամբ։ Մեր իրականության մեջ շարժման գլխավորողը, եթե կարելի է այդպես ասել, եղիա Տեմիրճիպաշյանն էր, իր մռայլ հոռետեսությամբ ու նիրվանալական միստիկ ձգտումներով։ Բնապաշտական զգացողությունը Տեմիրճիպաշյանի ու նրա հետևորդ գրական միջակությունների մոտ իր արտահայտությամբ ինքնանպատակ էր։ Շարժումը, սակայն, պատահական երևույթ չէր, այն ուներ իր պատմական հիմքերը։ Շարժմանը հարել են ժամանակի մեր մյուս արևմտահայ մեծ բանաստեղծները ևս, մասնավորապես Ինտրան (Տիրան Չրաքյան), Սիամանթոն, Վարուժանը։ Սիամանթոյի «Դյուցազնորենի» Ռիգ-Վեդայից վերցված բնաբանը՝ «Այնքան արշալույսներ կան որ տակավին չեն ծագած...» և այն, որ նա ինքն իրեն հռչակում է «արևելքներու քնարավոր», այդ բանի լավագույն վկայություններն են։ Միայն թե և՛ Սիամանթոն, և՛ Վարուժանը որդեգրեցին արևելյան պանթեիստական բնապաշտության առողջ ոգին։

Սիամանթոն իր երգերով մի նոր փուլի սկիզբը պայմանավորեց մեր գրականության մեջ։ Բանաստեղծությունը կրկին սկսեց ժողովրդի ցավի, տառապանքի ու նրա ձգտումների արտահայտությունը լինել։ Բանաստեղծի բնապաշտությունը այդ զգացողության լավագույն դրսևորումներից մեկը եղավ։ Արևն ու արշալույսը դարձան կյանքի, լույսի ու ազատության խորհրդանիշեր։ Փաստորեն, կարծես, ըմբոստացել էր Սիամանթոյի ներքին բանաստեղծական բնազդը, ըմբոստացել էր ժողովրդի բնապաշտական զգացողության խեղաթյուրման դեմ։ «Դյուցազնորենը» այդ ըմբոստացումի արդյունքն է։ Բանաստեղծությունների այս շարքը իրականում դրամատիկական մի պոեմ է։ Շարքի առաջին՝ «Հույսին ճամփան» բանաստեղծության մեջ, որ պոեմի ծրագրային նախերգանքն է, Սիամանթոն գլխավոր գործող կերպարի՝ դյուցազնական ամբոխների (որ ինքը ժողովուրդն է) բերանով ճշտում է բանաստեղծի կոչումը և նախապատրաստում ակնկալվող գործողությունների ակզբնապատճառն ու նրանց հետագա ընթացքը։

Ու հետո ու մանավանդ ըլլալու համար Ան՝ որ պետք է ըլլալ
վերջապես,
Այս մաքառումի ու ակնկալության օրերուն,
Ամբողջ երկիրը, ստվերիդ մեջեն, հոգիիդ հետ, առանձին,
Հորիզոնե հորիզոն քալե՝ դուն,
Ավաններեն, ու դաշտերեն, ու արտերեն անծայրածիր,
Դեպի քաղաքներն, ու գյուղերն ու հնձաններն հեռավոր.
Ու քայլիդ վրա անխոչորեն նորեն վերադարձիր,
Եվ մոլեգնաբար Մահը հոտոտե՛,
Դիտե՞ս որ պետք է բախվիլ անկե,
Բանալու համար մեծ ճամփաները Հույսին,
Որպեսզի, վերջապես, Երազն երիվարները փոթորկանման
Մեր կամքին ձեռվրներեն դյուցազնաբար վարվելեն՝
Հաղթանակին կատարներուն վրա արձանանան...։

Ակնարկը ավելի քան պարզ է՝ հայրենի բնաշխարհի, նրա նկատմամբ բանաստեղծի ներքին զգացողության («Ամբողջ երկիրը, ստվերիդ մեջեն, հոգիիդ հետ, առանձին...») և երկրում տիրող ավերի ու մահվան («Եվ մոլեգնաբար Մահը հոտոտե...») հակադրության ծնունդն է ամբողջ «Դյուցազնորենը»՝ հանուն «Արդարության և Զորության և Լույսի վաղորդայնին՝

Գրանիտե հավիտենական ու ճշմարիտ Ոստաններուն
Աստվածադիր հիմնաքարերը կարենալ կրելու համար...։

Ինչպես տեսնում ենք, Սիամանթոյի բնապաշտական զգացողությունը, բախվելով ժամանակի հասարակական իրավիճակների հետ, պայմանավորում է պոեմի և՛ թեման, և՛ հիմնական գաղափարական տրամադրվածությունը։ Եվ այդ զգացողությունը պոեմի հետագա ընթացքում, ենթարկվելով իր իսկ ծնունդը հանդիսացող պոեմի թեմային, դառնում է արդեն բանաստեղծական տրամադրությունների ու բնութագրումների արտահայտչամիջոց։ Ստեղծագործական պրոցեսի այս ներքին կառուցվածքը կարելի է որպես հիմք ընդունել Սիամանթոյի համարյա ողջ ստեղծագործության համար։ Կառուցվածքի առաջին մասը անփոփոխ է, իսկ երկրորդը փոփոխվում է բանաստեղծության ասելիքին ու տրամադրություններին համապատասխան։ «Դյուցազնորենն» շարքում Սիամանթոյի բնապաշտական զգացողությունը համահնչյուն է շարքի հաղթական ու դյուցազնական տրամադրություններին։ Շարքի երկրորդ՝ «Աստվածացումը» բանաստեղծությամբ սկսվում է պոեմի գործողությունը.

Ըմբոստացողներու ամբոխն երբ առավոտին մեջեն
խելահեղորեն կը հառաջանար
Դեպի բախումները նորանոր ու նպատակը սրբազան,
Տեղափոխվող անտառներու զարհուրանքը տարածելեն՝
Ու նվաճելով հորիզոնները սարսափահար...

Հառնում են նրանց առջև «երկու Ձևեր» «դաժանորեն սպառազեն, իրենց սուրերն արեղակին»։ Նրանք գալիս են աստվածացումի երգը երգելու բոլոր նրանց, ովքեր ընկան և պիտի ընկնեն իրենց գարուններն ու արշալույսները արյունելով այլոց փառքի ու ազատության համար։

Ո՞վ դուք որ ձեր գարուններն, ձեր արշալույսներն
ու հոգիներն անհուն՝
Մեր ամենուն փրկությանը համար
Ա՜յնչափ այլասիրորեն արյունելով անմահացաք...։

Շարքի հաջորդ՝ «Արշալույսները» բանաստեղծության մեջ դյուցազնական ամբոխները կուտակվում ու լեռնանում են մի՛ ապառաժուտ բլուրի վրա՝ նախապատրաստվելով մեծ ճակատամարտին։ Աստվածացումի երգը շարունակվում է. այս անգամ արդեն երգում են դարերով ապատության համար նահատակված դյուցազունները՝ կռիվների ու հաղթանակների շնչից կրկին սանգամ վերակենդանանալով։ Նրանց երգը շարունակում են հայ մայրերը, որոնք իրենք սեփական կյանքով ու արյունով սնում են վաղվա դյուցազուններին։

Ու ես բլուրներուն վերեն ու դաշտավայրին վրա,
Անհունորեն ոտքի՛, ինչպես աշտարակ մը գրանիտե,
Տեսա որ, բյուրավո՛ր ու բյուրավո՛ր ծննդարեր հայ մայրերը
սևահեր
Իրենց նորածին զավակները ձեռքերուն մեջ ու խելահեղորեն
դեպի վե՛ր
Արյունոտած հորիզոններուն ամբարձուցին,
Ջանոնք առավոտին ճառագայթներուն խորը մխրճելով,
Աստվածածին լույսերուն մեջ մկրտելու համար...։

Աստվածացումի երգերի մեջ ծնվում են վաղվա արշալույսները.

Երգերը դադրեցան, մինչդեռ հանկարծ՝ հայտնվեցավ որ,
Անդին, անծայրածիր ու հեռավոր արտերուն վրա,
Բոլոր երիտասարդ ու լայն ու հուժկու հերկողները մեր
վաղնջական հողերու,
Իրենց խելահեղ եզներն երկաթներուն լծած, ու համառորեն,
Ադամանդյա արգասավոր Արշալույսները կ՝արորեն...։

Գալիս է ճակատամարտի օրը, ու գալիս են նրանք՝ դյուցազնական ամբոխները «խավարներուն երկնքեն» սանձած իրենց երկաթե երիվարները ահարկու, գալիս են «հորիզոններուն ու հողերուն բոլոր գոտիներեն», հարբած առավոտի լույսերով ու իրենց «դոուլթովը դժոխային», սասանելով ճակատամարտի դաշտավայրը։ Ու հանկարծ իրենց այդ վճռական երթի պահին, «...Երբ լուսինը եղերականորեն դեպի երկինք կ՝ամբառնար, Խավարներուն անդունդները իր հրգեհներն անտառելեն...», հառնում է նրանց առջև «ուրվական մը, թերևս արքա մը մեր հին փառքի օրերուն, զրահը արեգակի նման կուրծքին...»։ Ու հրեղեն տեսիլքն այդ անցյալի բերում է նրանց համար մեր հայրերի հաղթանակի դրոշը, որպեսզի առագաստեն այն հորիզոններին՝ արշավելուց առաջ։ Սկսվում է ճակատամարտը, պայքարը հանուն արծաթյա արշալույսների։

Ինչպես տեսնում ենք, մինչև հիմա հիշված բանաստեղծությունների մեջ Սիամանթոյի բնապաշտական զգացողության համակարգից մեծ գեր է հատկացված բնության վերացականություններին՝ դարուն, արշալույս, առավոտ և այլն, սիմվոլիկ դրսևորումներով։ Իսկ հաջորդ երկու բանաստեղծություններում արդեն («Հաղթանակեն հետո» և «Վաղորդայնը և հանդրվանը») բնությունը իր արտահայտություններում ավելի առարկայական է։ «Հաղթանակեն հետո» բանաստեղծության մեջ հանդես է գալիս հայրենի մի գետ՝ կիսասիմվոլիկ արտահայտությամբ։ Հաղթանակից հետո, գործողությունների հաջորդական ընթացքի մեջ, դեպի մայրական գորովանքներով լեցուն գրկերը ժամանելուց առաջ, դյուցազնական ամբոխները, նահատակներին հողին հանձնելու արարողությունից հետո, գալիս են հայրենական գե-

տի ալիքների մեջ մաքրագործվելու, նախ և առաջ հաղթանակի ավետիսը բերելով մահվան հովիտ դարձած, դարերով տառապած հայրենի բնության, որի իսորհրդանիշն է հենց այդ դետը։

Ու հետո, վերջապես, ինձի հետևեցեք դեպի քավությունը սա
մրրկոտ ջուրին
Որ մեր հայրերուն դիակներովը բեռնավորված,
Իր արհավիրքեն զանոնք այնչափ ատեն սա ապառաժներուն դիմացը
կփշրեր...
Եկե՛ք ձեր արյունոտ դաստակներն հուժկու,
Իմ արյունոտ դաստակներուս հետ,
Անոր սրբագործող ալիքներուն մեջը մաքրելու...։

Հայրենի գետի ջրերի մեջ մաքրվելուց հետո, կատաղի կովից խոնջացած դյուցազունները դիմում են դեպի հանգրվան։ Նրանց դիմավորում են հայ մայրերը՝ փառաբանության իրենց երգով։ Այս երգը շատ հետաքրքրական է իր ինքնատիպությամբ։ Սիամանթոյի բնապաշտական զգացողությունը դրսևորվում է այստեղ իր ողջ էությամբ։ Կարծում ենք, որ իր այս երգով Սիամանթոն որոշ չափով կանխում է հետագա մեկ և կես տասնամյակի ընթացքում մեր գրականության մեջ առաջացած երկու հիմնական շարժումները. մեկը՝ հեթանոսական շարժում և մյուսը՝ որին կարելի է պայմանականորեն անվանել «հայրենի երգի» շարժում, որի հիմքում ընկած էր հողի աշխատավորի և հայրենի բնաշխարհի հովվերգությունը։ Նախ՝ հեթանոսական շարժման մասին։ Ինչպես հայտնի է, այս շարժումը մեր գրականության մեջ իր բուն արտահայտությունը գտավ 1908 թ. հետո, երբ Թուրքիայում ծավալվեցին հակասուլթանական շարժումները և դրա հետ մեկտեղ ազգային ինքնագիտակցության զարթոնքը նոր թափ ստացավ։ Շարժման հետևորդները եկան ժամանակաշրջանի անդեմ ու անարյուն իրականությանը հակադրելու հեթանոսական ժամանակների ազատ բնապաշտությունը, անկաշառ սերն ու ասպետական կենցաղը։ Ստեղծագործությունների մեջ վերակենդանություն գտան հեթանոսական պաշտամունքի որոշ ծեսեր ու անցյալին բնորոշ նկարագրական որոշ տարրեր։ Ահա այս առումով էլ հենց հատկանշական է Սիամանթոյի երգը.

...«Ու ահա՛վասիկ շուշաններն անբասիր,
Ձեր դեռ արյունլվա ոտվընեերուն տակ
Արշալույսին հետ, ձեր փառավորումին համար,
Մեր մայրական ձեռվընեերովն հնձված...։

«Ու ահա՛վասիկ արծաթյա խնկամանները սրբազան,
Ինչպես վաղնջական ու մաքրակրոն քրմուհիներ,
Այսպես մեր անշտ՛րժ ձեռվընեերուն բարձունքեն,
Ո՛ղ ձեր հաղթողի կերպարանքներուն առջև՝
Մեր պաշտամունքն արտաբուրեն...։

Ինչպես տեսնում ենք, հիշյալ տողերում ակնհայտ է հեթանոսական ժամանակներից եկող շունչը։ Չնայած այն հանգամանքին, որ «Դյուցազնորենը» ստեղծվել է 1899—1901 թթ., այն համահնչյուն է գրական վերոհիշյալ շարժմանը, քանի որ նույնպիսի հակադրության ծնունդ է և կոչում ունի հույսի ու զարթոնքի դյուցազնական ջահեր վառել ցեղի սրտում։

1908 թ. հետո զարթոնքի ու երազների խանդավառ տարիներին հետևեց հարաբերականորեն կարճատև խաղաղության մի ժամանակաշրջան։ Ժողո-

վուրդը ծարավի էր խաղաղորեն իր հայը վաստակելու և վաստակածը վայելելու։ Մեր հոգևոր մշակույթը անմիջապես արձագանքում է այս ձգտումին։ Սկսվում է մի նոր շարժում՝ «Հացին երգի» շարժումը։ Այս շրջանում է, որ Կոմիտասը հանդես է գալիս հայ գեղջուկ երգերին նվիրված դասախոսություններով և հայրենի հանգերի հորովելներին նվիրված հոդվածներով։ Գրականության մեջ այս շարժումը շատ հետևորդներ ունեցավ, բայց նրա գլխավոր ներկայացուցիչները եղան Սիամանթոն՝ իր «Հայրենի հրավերով» և Վարուժանը՝ «Հացին երգը» բանաստեղծաշարով։ Բնապաշտական շարժում էր այս իր հիմքում, որ մի դեպքում նպատակ ուներ հրավեր կարդալու տարագիր ու վտարանդի հայությանը՝ վերադառնալ դեպի լքված հայրենի տունն ու հայրենի անմշակ դաշտերը, մյուս դեպքում՝ հացի երգի ու խաղաղ աշխատանքի փառաբանությունն էր։ Ահա այսպիսի տրամադրությունների ենք հանդիպում «Դյուցազնորեն» վերջին բանաստեղծության մեջ.

«Ու ահա՛վասիկ, ոսկիե որաները ավետարանական ցորյանին...
Ու հեռուներեն արգասավոր դաշտերուն տարածվումը անսահման,
Ահա՛վասիկ գարունեն բարձրացող հողին հոտը կենսաբեր,
Ու ահա՛վասիկ նորեն լայն շարժումները սերմնացաններուն...
Ու ահա՛վասիկ հոտերուն տողանցումը բլուրներեն վեր,
Ու ծաղիկներու ածուներ ձեր սպիտակ վրաններուն համար...։

Հաղթական դյուցազունների վառաբանության երգի վերջին մասն է այս՝ սերմնացանների ու հայրենի դաշտերի հովվերգությունը։

Սիամանթոյի բնապաշտական զգացողությունը կարծես ուղղություն է տալիս իր իսկ բանաստեղծական բնագրին՝ գալիքը կանխազգալու և տեսնելու։ Երգերն ավարտվում են, ավարտվում է նաև «Դյուցազնորենը»՝ բնապաշտական սիմվոլիկ մի վերջաբանով.

Երգերը դադրեցան, և հայ մայրերն իրենց զավակներուն հետ,
Սրբազան Արարատներուն դեմ ծնրադիր ու բաղուկնին դեպի վեր,
Հաղթանակը տոնելե առաջ, նախ աղատության Հողին համար,
Դարերու անձայն սուգեն հետո՝ իրենց պաշտամունքը մատուցին։

Այսպիսով, Սիամանթոյի բնապաշտական զգացողությունը, պայմանավորելով բանաստեղծությունների այս շարքի թեման ու գաղափարական տրամադրվածությունը, իր հերթին հանդես է գալիս նրա մեջ՝ բանաստեղծական պաթոս և ռոմանտիկ մեծ շունչ հաղորդելով սիմվոլիստական այս գործին և պայմանավորելով նրա հեղինակի ուրույն ու պատվավոր տեղը ընդհանուր սիմվոլիստական գրականության մեջ։

ПАНТЕИЗМ СИАМАНТО

О. Г. БЕКМЕЗЯН

(Резюме)

В статье дается психологический и историко-философский анализ цикла стихотворений «Дюцазнорен» классика западноармянской литературы Сиаманто. При выявлении особенностей поэзии Сиаманто рассматривается вопрос о том, какое значение имело пантеистическое мировосприятие поэта для определения темы и настроения этого цикла и какое выражение оно нашло в отдельных стихотворениях.